

Ա. Փափազեան:

1539.

1902. № 1407.

ԿՈՐՍՈՒԿԱԾ ԱՐԴՅՈՒՆԻԹԹԻՒ



ԲԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ „Ա. Բ Օ Ր Ա”

1902.

891.99

4 - 31

891.39

Ֆ - 31

13 APR 2011

Ա. Փափազեան:

ԿՈՐՍՈՒՄԸ ԱՐԴԱՌՈՒԹԻՒՆ

(Զինական լեգենդա)

Հրատարակ.
Յովհ. Ամիրեանի և Անուշ. Բալանթարի.

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐԱ”
1902.

28.08.2012

60001

МС РРД



ԿՈՐՄՈՒԱԾ Ա.ՐԴԱՐՈՒԹԻՒՆ

(Զինական լեզենդա)

Դօք. ցուց. Ս.-Պետրուպոլիսի
անհետացաւ յանկարծ:

Մի անգամ Ս.րդարութիւնը
անհետացաւ յանկարծ:

Ս.սենը, նա յաճախ էր կոր-
ուսւմ:

Խուսափելով իրեն ծխրող,
պատի ի պատ խնինդ, վկող
անձերից, յաճախ նա վախնում
էր լիոները, պահում աշխար-



S6066-66

Հիս հեռաւոր անկիմններում:
Բայց ամեն անգամ, այսպէս կամ
այնպէս, յաջողւում էր նրան
զանել, բռնել, վանդակի կամ
սնդուկի մէջ գնել, ուզածին պէս
գործածել... չարշարել:

Այս անգամ սակայն, չը
գիտեմ ի՞նչ հետքով, Արդարու-
թեանը յաջողվեց լաւ անհետա-
նալ. այնպէս լաւ թագնուից, որ
մարդիկ ազօթքով, եղուիու-
թեամբ, ոյժով կամ ոսկով իսկ
անկարող եղան նորան զանելու:

Սկսեց մեծ իրարանցում:
Առանց Արդարութեան դժուար
էր ապրել. մանաւանդ, որ նորա

ան հետանալով, մերկանում էին
մարդկութեան «օգտակար» շատ
հաստատութիւններ և շատ աղ-
տուութիւններ, որպիսիք են—
կեղծաւորութիւն, անիրաւու-
թիւն, խարէութիւն, արիւնհե-
ղութիւն և այլպիսի շատ այլ
թոյններ, որոնց այնքան լաւ գի-
մակաւորում էր Արդարութիւնը:

Եւ ահա Արդարութեանը
վնասուելու ելաւ նախ մի պատե-
րազմիկ—մի ազնուական։ Շատ
զօրք ժողովեց, վաշա ու գունդ
կազմեց և երգուեց, որ Արդա-

բութիւնը ար ծովին լնկած լինէր,
պիտի հանէր և ձեռքն ու ոտը
կաղած՝ պիտի մէջ տեղ բերէր:

Եյդ պատճառով իսկ, ոտ-
նակոխ տալով նա գիւղ ու քա-
ղաք, արիւն սփռելով գաշտ ու
ձոր, ջարգեց, սրամաշ արաւ
ամեն ինչ: Տակն ու վրա գար-
ձրեց ամեն բնակութիւն և այդ-
պէս առաջ էր դնում, յուսալով
րոնել Սրբարութիւնը:

Նորանից յետոյ ճանապարհ
ընկաւ Սրբարութիւնը որսնելու
միշտ հարստա մեծատուն: Ոսկի
և արծաթ, զարդ ու զարգարանք
բարձեց ուզտերի և վստահ իր

ուկու վրայ, տնից դուրս եկաւ:
Սոսւմ են, որ մի քանի հատ էլ
սիրուն կանայք վերցրեց, որ
ոսկու փայլի վրայ գեղեցիու-
թեան հրապոյրն էլ աւելացնէր:

—Կը տեսնէր, պնդում էր
նա — Սրբարութիւնը ոսկովս
պիտի գնեմ, կանանցով պիտի
գրաւեմ և սնդուկիս մէջ գրած՝
մէջ տեղ պիտի բերեմ:

Սրբակսէր ահա, որ բռունցըն
ուսկին գնացին Սրբարութիւնը
որսնելու... և գեռ գնում են:
Թող գնան:

Տեսնենք այժմ, թէ ով էր
այն երբորդ անձը, որ խեղճ ու
կրակ, ցնցոտիք հագին, ճակատը
վշտերով խոր-խոր ակօսած, մտա-
ծեց ենել Արդարութիւնը որո-
նելու:

Ասենք, ազնուականը սուր
ունէր, հարուստը՝ ոսկին. իսկ սա
ինչ ունէր, ինչո՞ւ պիտի գտնէր
Արդարութիւնը:

Թշուառն էր գա: Բոլոր ըն-
ծաների փոխարէն էլ տարածն էր
մի չնշին սրուակ, որ ամուր կեր-
պով սեղմել էր կրծքին և յա-
մառութեամբ ճանապարհ ընկել:
Բանն այն է, որ սրուակը լցրել էր

մի չը լսուած հեղուկով: Որբից
մի արցունք, ընկածից մի հա-
ռաչ, գործաւորից մի դառը քրր-
տիք... մի խօսքով, վշտերի
արցունքներից մի մի կաթիլ
ժողոված, լցրել էր շիշը, պինդ
փակել և կարծում էր թէ տա-
րածը անշուշտ պիտի դրաւէր
Արդարութիւնը:

Ու քայլում էր: Անցներով
մեծ-մեծ քաղաքներից, խուլ հե-
ռաւոր գիւղերից, քայլում էր
անխոնչ, ձորեր ցած իջնում,
լեռն ՚ի վեր ելնում, ամեն քայ-
լափոխին էլ կանդ առնելով կան-
չում.

— Ուր ես, Արդարութիւն:

Արդարութիւն չը կար. ոչ
երեսմ էր, ոչ էլ ձայն տալիս:

Ահօթի, ծարաւ, յոդնած,
վշտալից, երկար թափառեց
թշուառը ամեն ուզզութեամբ,
սրախ վրայ սեղմած ունենալով
սրուակը, որի հեզուկը սկսել էր
եռալ և տպանալ։ Արդարու-
թիւնը սակայն չը խղճաց նորան
էլ. ոչ երեաց և ոչ էլ գոյութիւնը
լայտնեց։

Վերջապէս, երբ յուսաբեկ,
ուժասպառ հասել էր լեռան
կատարին, նստեց մի ժայռի

վրայ և սկսեց մտածել, թէ իդուր
է Արդարութիւն որոնելլ, քանի
որ նա խուսափում էր թշուառից
անկամ։

Եւ երբ այդպիս մտածեց,
բարկացած հանեց ծոցից սրու-
ակը ու խիեց ժայռին։

Գնա ոչնչացիր, զոչեց նա,
իդուր են բոլոր վշտերն ու
արցունքները. Արդարութիւնը
թշուառին չէ սիրում...։ Բայց
հազիւ թէ սրուակը փշրուել էր,
որ յոսեց մի ահեղ որոտում,
հոսած արցունքներից թանձր
ծովս բարձրացաւ, փրփրաց ոլոր-
ուեց և նրա միջից, ահարեկ թըշ-

ւառի առաջ գուրս ցցուեց մի
ահեղ հսկայ:

Սարսափած թշուառը ըն-
կաւ երեսի վրայ...

Ելիր, կանչեց հսկան մե-
ծաձայն. ելիր և մի վախենալ:

Ո՞վ ես դու, ահեղ ոզի.
Հարցրեց թշուառը:

Ես, գոչեց հսկան: — Ես
Բողոքն եմ, որ ծնայ այդ թա-
փած արցունքներից և որ պիտի
աշխարհը բերեմ անհետացած
Արդարութիւնը.... Նայիր...

Սպա, արշալոյսի կարմրո-
րակ լոյսի մէջ ցցուեց հսկայի վեհ

հաւակը, զարձած դէսի բար-
ձրութիւնները, ուր սկսել էր
մի փոթորիկ և ուր գետինն
ամբողջ զսզում էր գզրդիւնով:

Եւ հեռուն, հսկայի պար-
զած ձեռքի կոզմը, մի կոյտ
մարուր ամպերի բացուածքից
երեան եկաւ թագնուած Արդա-
րութիւնը — խորունկ, տխուր հա-
յեացքով, առանց կշուրի, առանց
մեծ սրի:

Ես ծնել եմ և իմ ձայնը
թող քեզ համար կշիռը ու սուր
դառնայ, եկ, Արդարութիւն...

Բայց Արդարութիւնը ան-
շարժ ու տխուր նայեց նորան,
նայեց թշուառին և ասաց:

Դեռ նչ... դեռ դու փոքր իս
գնա քայլիր, կուտակիր արցունք,
կուտակիր վշտեր, մեծացիր որ-
պէս օվկեան, կատաղիր որպէս
հեղեղատ և այն ժամանակ միայն
իս կը գտմ իմ սրով և իմ կշի-
ռով...

Սպա ամսլը սահեց և Ար-
դարութիւնը նորից անհետացաւ
իր անմատչելի բարձրութեան
մէջ...

Սյդ օրից ահա, պատերազ-
միկ զօրեղը արխնի մէջն է
որոնում Արդարութիւնը, հա-
րուստն իր ոսկու և թշուառը,
նստած իր վշտերի մօտ, իր
արցունքներով մեծացնում է

Բուրիմ, որ նա վերակոչէ աշ-
խարհումս կորսուած Արդարու-
թիւնը...

—○—

ՎԵՐՁ





ՀՀ Ազգային գրադարան



NL0370256

60001

9p666 b 5 4.